

Էռնեստ Հեմինգուեյի «Կատուն անձրևի տակ» կարճ պատմվածքի ոճական քննություն

Չաղինյան Նինա

Հանգուցային բառեր. գրելաոճ, «Այսբերգյան տեսություն», ոճական միջոցներ, խորհրդանիշներ, օտարաբանություններ, մարդու մեկուսացում, խորթացում, մինիմալիստական ոճ

Նախաբան

20-րդ դարի ամերիկյան գրականության դասական Էռնեստ Հեմինգուեյը աշխարհին հայտնի է ոչ միայն որպես վիպական ժանրի խոշորագույն ներկայացուցիչ, այլև կարճ պատմվածքի մեծագույն վարպետ: Նրա գործերին բնորոշ է հակիրճ, թվացյալ պարզ, բայց միևնույն միջոցին՝ խոր բովանդակային ոճ, մի բան, որ հաստատապես արդյունք է իր լրագրողական նախնական մասնագիտական մոտեցման: Նրա լեզուն բնական է, հասարակ՝ միայն արտաքուստ, սակայն ներքուստ՝ խոր և անընդհատ մտածելու տեղիք տվող: Հեմինգուեյի գրական ասելիքը հենված է իր իսկ ստեղծած «Այսբերգյան կամ բացթողնման տեսություն» վրա, որը պատկերավոր լեզվով ներկայացնում է տեքստ-ենթատեքստ հարաբերակցությունը: «Այսբերգ» կոչվածի միայն աննշան մասն է տեսանելի, այն է՝ տեքստը՝ փոխաբերական առումով, իսկ հիմնական մասը՝ խորությունը, անտակ է, որն է ենթատեքստը: Այս հնարք-սկզբունքը արտացոլում է Հեմինգուեյի հեղինակային մոտեցումը գեղարվեստական տեքստին: Այն օգնում է հասկանալու տեքստ-ենթատեքստ միասնությունը: Այս գրական, ինչպես չէ, նաև հոգեբանափիլիսոփայական սկզբունքը հանգում է նրան, որ գեղարվեստական խոսքի մեջ չարժե մանրամասնել ասելիքը, և քանի որ «այսբերգի» միայն մի՝ վերին մասն է տեսանելի, այն է՝ տեքստը, ընթերցողը պիտի ինքը խորհի այն ամենի մասին, ինչը բացահայտ չէ ասված: Հեմինգուեյը հավատում էր, որ այս հնարքի կիրառումն է կերտում կարճ պատմվածք, և որքան շատ մանրամասներ է գրողը դուրս թողնում նյութից, այնքան հզոր է դառնում պատումը: Հետագայում նրա գրական այս մոտեցմանը հետևեցին մի շարք այլ հանրահայտ իրապաշտ գրողներ, ովքեր, հիրավի, այս հնարքը ընդունեցին որպես իրենց գրական հավատամք: Հեմինգուեյի ստեղծագործությունների գերակշիռ մասը հենված է սեփական կենսափորձին, որի վառ վկայությունն է նրա թե՛

վեպերի, թե՛ կարճ պատմվածքների մեծ մասը: Հեմինգուեյական պատմվածքի մեր ուսումնասիրության ծիրում հատուկ շեշտադրում ենք արել տեքստի լեզվառճական քննության վրա՝ որպես մեր խնդրո առարկայի գլխավոր մաս:

**«Կատուն անձրևի տակ» երկի ոճական ընդհանուր բնութագիրը:
Հեմինգուեյի լեզուն՝ նշանավոր անձանց գնահատումներով**

«Կատուն անձրևի տակ» պատումը, ինչպես հեղինակի մնացյալ գործերը, հարկ է դիտարկել բացառապես «Այսբերգյան» լույսի ներքո, մի բան, որ փորձել ենք կատարել մեր աշխատասիրության (տեսական վերլուծության և թարգմանության) ողջ ընթացքում: Պատմվածքը գրված է ազատ, պարզ լեզվով՝ կարճ կառույցներ և հասարակ երկխոսություններ՝ համեմված ուշագրավ ոճական հնարներով, որոնք յուրովի գեղագիտական շունչ են հաղորդում ասելիքին: Մեր ուսումնասիրության մեջ կանգ ենք առել նաև տեքստում առատորեն օգտագործված խորհրդանիշների և օտարաբանությունների վրա, որոնք սերտորեն կապ ունեն պատումի ասելիքը խորապես ընկալելու հետ: Ողջ պատմվածքով մեկ ընթացող արտահայտչամիջոցներն ունեն ոչ միայն գեղագիտական, այլև ոչ պակաս հուզահոգեբանական նշանակություն և իմաստ: Դրանք մեր ուշադրությունը բևեռում են տեքստի նշանակետին՝ ըմբռնելու խոսքի ամենաէական կողմը: Վերլուծությունը կատարված է երկլեզվյան ուսումնասիրական համադրությամբ՝ կարևորելով ու պահպանելով թարգմանական համարժեքության անհրաժեշտ և պարտադիր կանոնները:

Խոսելով գրողի անհատական ոճի մասին՝ անտեղի չէ հիշատակել Դեյվիդ Ուայլդթի խոսքը այդ մասին, որում ասվում է. «... Երբ է. Հեմինգուեյը ստացավ գրականության Նոբելյան մրցանակ, հատուկ նշվեց նրա գրական ոճի մասին՝ որպես մեկը ժամանակակից պատումի ամենագլխավոր նվաճումներից» [9]: «Հեմինգուեյը ռեալիստ է, որի փայլուն հավատարմությունը կյանքի նկատելի կողմերին կատարվում է կենդանի երկխոսությունների միջոցով» [4]: Ժամանակակիցները սերտ կապ են տեսնում գրող Հեմինգուեյի գրականության և իմպրեսիոնիստ Մեզանի կտավների գեղագիտական զգացողությունների միջև: Ամերիկացի գրող Ռեյմոնդ Ս. Նելսոնը նշում է. «Հեմինգուեյը բառերով նույնն է արել, ինչ իմպրեսիոնիստները նկարչության մեջ» [7]: Մեծապես գնահատելով հեղինակի գրի հանդեպ ունեցած արվեստի հասնող ակնառու գեղագիտական մոտեցումներն ու անուրանալի տաղանդը՝ ամերիկացի գրող, կենսագիր Կառլոս Բեյքրըրը «Հեմինգուեյ: Գրողը որպես նկարիչ» աշխա-

տության մեջ պատկերում է հեղինակին և իր սերնդին, ինչպես նաև հեղինակի գործերը բարոյական և գեղագիտական տեսանկյունից [2]: Բրիթըն Փերելմընը նշում է. «Ջրի մակերեսին ամեն ինչ տեսանելի է՝ պատումը, սյուժեն, երկխոսությունները և գործողությունը, սակայն ջրի տակ ամեն ինչն է՝ մտքերը, զգացողությունները, խորհրդանիշները, թեման և ենթատեքստը» [10]: Նույն սկզբունքով Հեմինգուեյի պատումի ուժեղ մասն այն է, որ թաքնված է, ու երբ ընթերցողը տեղյակ է այդ հնարքին, բացահայտում է այն: Հեմինգուեյի ոճը կիսահեղափոխական է: Նա նախադասությունից հեռացնում է այն ամենը, որի կարիքը ինքը չունի: Նա ի վիճակի էր երկխոսություն գրելու նոր ձև ստեղծել, որը շատ արագ հասնում է պատմվածքի սրտին [7]: Հեմինգուեյին միշտ էլ համարել են երկխոսության վարպետ: Ե՛վ վեպերի, և՛ պատմվածքների մասին ընթերցողներն ու քննադատները նշել են. «Սա այն ձևն է, որով կերպարները իրապես կխոսեն» [3]: Հեմինգուեյը հավատում էր, որ այս հնարքի կիրառումն է կերտում կատարյալ կարճ պատմվածք, և որքան մանրամասներ է գրողը դուրս նետում, այնքան հզոր է պատումը դառնում:

Մեր աշխատության մեջ այս ամենին զուգընթաց մանրագին դիտարկման ենք ենթարկել հեղինակի «Կատուն անձրևի տակ» կարճ պատմվածքը ոչ միայն իր իսկ կերտած սկզբունք-հնարի, այլև հիմնականում լեզվաոճական տեսանկյունից: Հեմինգուեյի համոզմամբ գրողի ոճը պետք է լինի պարզ և անհատական, պատկերը՝ հարուստ և երկրային, իսկ բառերը՝ հստակ, հասարակ և հուժկու: Նրա գործածած խոսքը, բառերը, հիրավի, պարզ են ու զորեղ, փայլուն ու իրենց տեսակի մեջ եզակի: Այստեղ տեղին է հիշատակել Հերրի Լեվինի դիտարկումը՝ գրողի կիրառած բառապաշարին առնչվող. «Հեմինգուեյը հատուկ շեշտադրում է անում գոյականների վրա՝ գտնելով, որ այլ խոսքի մասերի մեջ դրանք առավել մերձ են իրերին» [6]:

Պատմվածքի քննությունը՝ բնագիր և հայերեն տեքստերի հանդիպադրությամբ

«Կատուն անձրևի տակ» պատմվածքը գրված է ազատ, պարզ ոճով՝ կարճ կառույցների և հասարակ երկխոսությունների գործածմամբ: Ահա սա է գրողի ոճին բնորոշ հատկանիշը: Նրա գործերը հաճախ կարող են թվալ ուղղակի պարզ ու հասարակ, սակայն դրանք իրականում իրենցում պարունակում են խորհրդանշային անդրադարձ, անգամ առտոնին մանրամասներ: Կատուն անձրևի տակ պարզապես կատու չէ, այլ հստակ խորհրդանիշ՝ մի ինչ-որ կարևոր բանի, այն է՝ երիտասարդ կնոջ, որն

ուգում է փրկվել անձրևից, կյանքի տաղտուկից ու նաև ինքն իրենից: «Կատուն անձրևի տակ»-ում ակնհայտ է «այսբերգի տեսության» վառ ներկայությունը: Այն, որ «ինչ-որ բան կա մակերևույթի տակ», կապված է կատվի խորհրդանիշի հետ. հակված ենք կարծելու, որ այն երիտասարդ ամերիկուհու՝ մանուկ ունենալու ֆիզիկական ցանկությունն է նաև:

«Կատուն անձրևի տակ»-ն ունի հավաստի կուռ կառուցվածք. մի պատմություն է, որում սեղմ գույներով պատկերվում է մի երիտասարդ գույգի փոխհարաբերությունը ետպատերազմական իտալական մի հյուրանոցում, մի պատմություն՝ իբրև թե իրենց մեղրամիսն անցկացնող գույգի մասին, որն ասես անլուր միայնության և չհասկացվելու խնդրի առջև է կանգնած: Այստեղ միաժամանակ շեշտադրում է արված նրանց կացավայրի մոտ գտնվող բրոնզե հուշարձանին՝ որպես «անիծյալ ահեղի թախծի» հիշեցում, որի անունն է պատերազմ [1]: Միայնություն և պատերազմի հարակից հուշ-հիշեցում. սրանք ևս ասես խորհրդանիշ են մարդկային հոգեկան հուզառատ ապրումների, անկումային տրամադրության: Այստեղ իսպառ բացակա է մարդկային ջերմ խոսքը, հաղորդակցությունը գրեթե իսպառ բացակայում է այդ գույգի ներսում, ուստի կինը, պատուհանից տխրամած նայելով դուրս՝ անձրևի տակ կծկված կատվիկին, փորձում է ներս բերել, սակայն իջնելով ներքև՝ այլևս չի գտնում նրան: Նա կրկին փորձում է խոսել գրքի մեջ թաղված ամուսնու հետ, սակայն իգուր: Նրանցից մեկը մեկուսացած է անձրևից, մյուսը՝ երիցս անտարբեր ամուսնուց: Կատվիկ և երիտասարդ կին՝ երկուսն էլ փորձ են անում փրկվել անձրև-վտանգ-անձուկ եռամիասնությունից: Երկուսի ձգտումն էլ մեկն է՝ ազատ լինել: Կինն ասես հենց անձրևի տակ կծկված կատվիկ լինի՝ ծեծկված ու հոգեպես լքյալ: Պատումը վկայում է Հեմինգուեյ-հեղինակի՝ մարդկային հոգու խորքերը թափանցելու մեծ վարպետության մասին: Միալար անձրևը խորհրդանշում է տվյալ իրավիճակում մարդկային հոգու թախիծը, մելամաղձությունը, լարվածությունը: Պատմվածքը նաև որոշակի հանրային խնդիրների, չիրականացած ցանկությունների, երազանքների և միաժամանակ կարիքի խորհրդանիշ է: Նրանում իրարից և աշխարհից մեկուսացած երիտասարդ գույգի իրական կյանքի մի դրվագն է պատկերված հավաստի գույներով:

«Կատուն անձրևի տակ» պատումը աչքի է ընկնում ոչ միայն մարդկային հույզերի, հոգեկան ապրումների, լարվածության իրական ու, ինչու չէ, փոխաբերական ուշագրավ լուծումներով, այլև գեղագիտական և լեզվական պատկերավորման նրբին մոտեցումներով: Այստեղ միալար թախ-

ծալից անձրևը, այգիների ու ծովին հառված հյուրանոցի վառ գույները մի տեսակ տպավորական ներդաշնակություն են ստեղծում: Դիտարկելով հիշյալ պատումը լեզվառճական տեսանկյունից՝ առավելապես շեշտադրում ենք արել նաև կերպարների հուզահոգեբանական կողմին: Հեմինգուեյի շատ գործերում, իսկ այս գործում նա, հաճախադեպ են ոճական կրկնությունները, զուգադիր, բազմաշաղկապ կառույցները, բաղաձայնույթները, խորհրդանիշները, թվարկումները և օտարաբաբանությունները: Հարկ է նշել, որ նրա մոտ հիմնականում բացակայում են «ածակա-նախեղ» պատկերավորման միջոցները, քանզի, իր կարծիքով, տեքստը պիտի առանձնակի, երբեմն անհարկի գունավորումից հնարավորինս զերծ լինի: Այդ մասին են վկայում նրա պարզ ու խորունկ-անպաճույճ ոճն ու լեզվամտածողությունը: Այս ամենը փորձել ենք դիտարկել անզլերեն-հայերեն օրինակների համարժեքային համադրությամբ (թարգմանությունը մերն է՝ Ն. Ջ.): Այսպես՝ տեքստային մթնոլորտի մեկամաղձության տպավորությունը («անձրևի միջոցով») շեշտելու նպատակով հեղինակը օգտագործում է ոճական միջոց՝ զուգադիր կառույցներ. “The rain dripped from the palm tree. The water stood in pools on the gravel paths. The sea broke in a long line in the rain and slipped back down the beach to come up and again in a long line in the rain”. [5, 159] («Անձրև էր գալիս, կաթիլ-կաթիլ թափվում արմավի ծառերից: Ջուրը տեղ-տեղ լճակ էր կազմել խճապատ կածաններին: Ծովը պատովել, անձրևաջրից մի մեծ շառավիղ էր կազմել ու ետ էր քաշվում ափն ի վար՝ առաջ գալու ու կրկին փշրտվելու անձրևի տակ՝ մի մեծ գծով» [1, 12]): Այստեղ նաև բաղաձայնույթն է առկա՝ “Rain dripped”-ի մեջ («Անձրև էր գալիս, կաթիլ-կաթիլ...»): Ոճական կրկնությունները՝ որպես հեղինակի նախընտրելի հնարք, լայնորեն են տարածված ստեղծագործության մեջ: Հետևյալ նախադասության մեջ մի քանի անգամ կրկնվում է “She liked”-ը («Նրան դուր էր գալիս») կառույցը. “She liked the deadly serious way he received any complaints. She liked his dignity. She liked the way he wanted to serve her”. [5, 160] («Նրան դուր էր գալիս այն ահավոր լուրջ ձևը, որով ծերուկը որևէ մեկից բողոք էր լսում: Կնոջը դուր էր գալիս նրա արժանապատիվ կեցվածքը: Նրան դուր էր գալիս վեջինիս հյուրանոցատիրային պահվածքը, և թե ինչպես էր իրեն սպասարկում» [1, 13]): Կրկնությանը զուգահեռ հետաքրքրական է օբյեկտորոնի առկայությունը՝ “deadly serious” («ահավոր լուրջ»):

Այստեղ հեղինակը առանձնապես շեշտում է կնոջ վերաբերմունքը հյուրանոցատիրոջ նկատմամբ: Պարզ է, որ նա իր անձի կարևորության

վայրկենական զգացում է ունենում: Տեքստում հերոսուհու մենախոսու-
թյունը ինքնին սպացույց է իր կյանքից դժգոհ և անբավական լինելու, և
այդ զգացումը ընդգծվում է պարբերաբար կրկնվող “I want”-ով («Ուզում
եմ»): Այն նաև ընդգծում է կնոջ խոր հուզական վիճակը: Այսպես. “And I
want to eat at a table with my own silver and I want candles. And I want it to
be spring and I want to brush my hair out in front of a mirror and I want a kitty
and I want some new clothes.” [5, 162] («Եվ ուզում եմ սեղան նստել իմ
սեփական արծաթե սպասքով ու մումեր եմ ուզում: Եվ ուզում եմ, որ
գարուն լինի, ու մազերս եմ ուզում սանրել հայելու առջջ, և մի փիսիկ եմ
ուզում ու մի քանի նոր շոր էլ» [1, 14]): Այստեղ կրկնությանը զուգահեռ
առկա է նաև շաղկապային առատություն. “And I want”. [5, 162] («Եվ
ուզում եմ» [1, 14], (“and” [5, 162] – («և», «ու»-ի [1, 14] միջոցով: Այստեղ
առկա է երգիծանք՝ ոճական հնարքը՝ յուրովի ընդգծելու կնոջ ամուսնու
ակնհայտ անտարբերությունը՝ անկողնուն բազմած. “Don’t get wet”,- he
said. [5, 162] («Տե՛ս հա, չրջջվե՛ս,- ասաց նա» [1, 14]): Մեկ այլ դեպ-
քում ամուսնու անտարբերությունը շաղախված է բարկությանը՝ անհա-
ղորդ դեռատի կնոջ փոքրիկ քմահաճույք-ցանկություններին. “Oh, shut up
and get something to read”, George said He was reading again.[5, 162] («Օ՛,
վե՛րջ տուր, մի բան վերցրու, կարդա», - ասաց Ջորջը: Նա վերստին
անցավ կարդալուն» [1, 14]): Պատումի վերջում հյուրանոցի սպասուհին
տիրոջ կարգադրությամբ մի մեծ թավամազ կատու է բերում կնոջ համար:
Երկի վերնագիրը՝ որպես խորհրդանիշ, ունի ուղղակի և անուղղակի
իմաստ: Անշուշտ, հայտնի է, որ կատուն իր բնույթով բնավ անձրևասեր
չէ, անձրևի մի կաթիլի դեպքում անգամ թաքնվելու տաք ու չոր տեղ է
փնտրում: Սակայն այստեղ «կատուն անձրևի տակ» է: Հիրավի, հեղինակը
միտումնավոր է ընդգծում այդ կատվիկի տկար ներկայությունը և կնոջ
հոգեկան վիճակի զուգորդումը: Այստեղ կրկին տեղին է կրկնության մեկ
այլ տիպական օրինակ բերել, որում հստակ երևում է կնոջ հուսա-
հատ բողոք-զայրույթը. “Anyway, I want a cat,” she said, I want a cat. I want a
cat now. If I can’t have long hair or any fun, I can have a cat”. [5, 162] («Ինչ էլ
որ լինի՝ կատու եմ ուզում,- ասաց նա:- Կատու եմ ուզում հիմի: Եթե
երկար մազեր չեմ կարող ունենալ կամ թե ուրախ մի բան, գոնե կատու՝
հո կարո՞ղ եմ» [1, 15]): «Կատուն անձրևի տակ»-ը հոգեբանական
պատմվածք է, քանզի հեղինակը վարպետությամբ քննության է առնում
մարդկային հոգիների ապրումներն ու տագնապները զանազան իրավի-
ճակներում: Բնավ պատահական չէ, որ պատումը իր մեջ ունի հոգեբա-

նական ենթատեքստ, այն արտացոլում է գրողի համակ վերաբերմունքը կյանքի նկատմամբ ընդհանրապես: Արդեն նշվել է, որ պատկերավորման միջոցների ընտրության հարցում Հեմինգուեյը փոքրիշատե «ժլատություն» է հանդես բերում՝ ուշադրությունից դուրս թողնելով գեղարվեստական տեքստին հաճախ բնորոշ մակդիրները, չափազանցությունները կամ փոխաբերությունները՝ թերևս միտում ունենալով ասելիքը ավելի ամուր և ավելորդ գունավորումից զերծ պահելու: Դրա փոխարեն նրա լեզուն և խոսքը ծայրահեղ հուզական հակիրճությամբ են գործուն ու նաև մտքի պայծառությամբ:

«Կատուն անձրևի տակ»-ը աղերս ունի մի շարք կարևոր խնդիրների հետ, այն է՝ մարդկային փոխհարաբերություններ. սա մի պատմություն է, որում գերակա է այն, որ բնավ չի կարող փոխըմբռնում լինել, ուր առկա է միայնություն, եսասիրություն և տանջալից մեկուսացում: Այս գործը միանշանակ մտածելու տեղիք է տալիս և ապացույց է այն բանի, թե ինչպիսին երբեք չպետք է լինել սիրելիների և մերձավորների նկատմամբ:

«Անձրևի» խորհրդանշային պատկերը յուրովի դառնում է պատումի քնարական հենքը: Հենց Հեմինգուեյի գեղագիտության մեջ առկա մանրամասները երկու կողմ ունեն՝ իրական և խորհրդանշական, և բնավ էլ պատահական չէ, որ այս մոտեցումը բնորոշ է բացառապես նրա բոլոր գործերին, և հիշյալ պատմվածքը բացառություն չէ: Մեր քննության տարածքում հանդիպել ենք բազմաթիվ նրբին ակնարկների, որոնք գերազանցապես միտված են ասելիքի գլխավոր գաղափարին, այն ամենին, ինչը հեղինակը փորձում է հաղորդել մեզ: Նրա օգտագործած ռճական հնարները ոչ այլ ինչ են, եթե ոչ յուրօրինակ ակնարկներ, որոնց ընկալումը ևս օգնում է մեզ հասնելու անհրաժեշտ միտք-գաղափարին՝ ճշգրիտ շեշտադրում անելով հիմնականին և առավել կարևորված մանրամասներին: «Անձրև» բառի հաճախադիպությունը այստեղ ոչ միայն բնութագրում է եղանակը, այլև այլաբանական տոնայնություն և թախծոտ տրամադրություն է հաղորդում պատումին: «Կատուն» միայնության, նաև տնանկության անմեկնելի խորհրդանիշ է դառնում: Հեմինգուեյի ինչպես գրեթե բոլոր գործերում, այստեղ ևս մեծ տեղ են գրավում օտարաբանությունները՝ առանձին բառերի կամ նախադասությունների դրսևորմամբ: Հայտնի է, որ օտար բառերի առկայությունը հիմնային տեքստում բնավ ինքնանպատակ չէ, դրանք միանշանակորեն պատկերավորման առաքելություն ունեն, և գեղարվեստական արձակում նման կառույցները միտում ունեն ընդգծելու իրենց տեղային գործունեության նշանակու-

թյունը: Դիտարկված օտարալեզու երկխոսական հատվածներում ևս Հեմինգուեյը պատումում տիրող նույն տրամադրությունն է տեղայնացնում, ինչ որ առկա է հիմնային լեզվի ընթացքում: Դիտարկման ենք ենթարկել մի շարք բնորոշ օրինակներ այդ առումով: Այսպես. «*Il prove*».[5, 160] («Անձրև է գալիս» [1, 13],– ասաց կինը: Պատասխանը. “*Si, si, Signora, brutto tempo.*” [5, 160]. («Այո՛, այո՛, սինյորա, եղանակը վատն է» [1, 13]), կամ այստեղ. “*Ha perduto qualche cosa, Signora?*” [5, 160] – («Դուք ինչ-որ բան էք կորցրել, սինյորա» [1, 13]: “*Si, il gatto*”.[5, 160] – («Այո, կատու» [1, 13]: Հեղինակի գործերում օտար բառերն ու արտահայտությունները լայնորեն կիրառվում են տարբեր ոճերի մեջ՝ նպատակ ունենալով շեշտադրել իրենց բնորոշ գործառությունները: Դրանց հիմնական գործառույթն է նշել գործողության տեղայնությունը, որոնցով և միաժամանակ ակնհայտ է դառնում ասելիքին որոշակի լեզվական լրացուցիչ հմայք հաղորդելու՝ գրողի նպատակադիր մոտեցումը: Նման լեզվական տարրերի ներկայությունը լավագույնս է արտացոլում տվյալ միջավայրը: Մեր դիտարկման առանցքում ընկած նման լեզվառճական հնարների ամբողջությունն ունի ոչ միայն տեղեկատվական, այլև գեղագիտական գունավորման հեղինակային անհագ միտում: Այստեղ իտալերեն երկխոսությունների առկայությունը հավաստում է գործողության տեղայնությունը, այն ևս կարելի է մասնակիորեն կապել «այսբերգյան սկզբունք-հնարքի» հետ, քանզի մեկ այլ լեզվի իմացությունը միայն հնարավորություն կտա ընթերցողին ըմբռնելու հեղինակային տեքստին զուգահեռված օտար լեզվական ասելիքի խորությունը: Գրողն ինքը չի փորձում բացատրել դրանց իմաստը՝ վստահ լինելով իր ընթերցողի իմացության մակարդակի վրա, այն է՝ փնտրել և գտնել տեքստի ամբողջական իմաստը նաև մեկ այլ լեզվի ներկայության մեջ: Պատումում կիրառված օտարաբանությունների գործունեությունը ունի նաև գեղագիտական արժեք՝ գրին առավել հմայք հաղորդելու, ինչպես չէ, նաև իտալերենի լեզվական մեղեդայնությունը հնարավորինս ակնառու դարձնելու առումով:

Էռնեստ Հեմինգուեյի «Կատուն անձրևի տակ»-ը մի կուռ պատում է ռեալիստական կառույցով՝ գրված պարզ, անմիջական ոճով, քիչ նկարագրական մանրամասներով, և որոնցով էլ այն առավել համոզիչ և մտերմիկ է դառնում:

Եզրակացություն

Քննության առնելով Էռնեստ Հեմինգուեյի «Կատուն անձրևի տակ» կարճ պատմվածքը ոճական տեսանկյունից՝ պարզել ենք, որ այն կատարված է հեղինակի գրելաոճին բնորոշ «Այսբերգյան տեսության» և մինիմալիստական մոտեցմամբ՝ շեշտադրում անելով տեքստ-ենթատեքստ հարաբերակցությանը: Գրողը իր երկերում առանձնապես կարևորություն չի տալիս ածականախեղդ գրին՝ առավելապես գործածելով պարզ, հակիրճ խոսք՝ համեմված խոհափիլիսոփայական մտածումներով: Ինչպես նրա գործերի մեծ մասը, այնպես էլ հիշյալ պատումը աչքի է ընկնում կուռ կառուցվածքով, ասելիքի խորությամբ, գործածած լեզվաոճերի, խորհրդանիշների և մեծաքանակ օտարաբանությունների նկատմամբ ունեցած խնամքոտ մոտեցմամբ, մի բան, որ անտարակույս խոսուն վկայություն է գրողի մեծ վարպետության և գեղագիտական բարձր ճաշակի:

Գրականության և աղբյուրների ցանկ

1. Էռնեստ Հեմինգուեյ, Այնտեղ, ուր մաքուր է ու լուսավոր (պատմվածքների ժողովածու), թարգմ.՝ Ն. Ա. Ջադինյանի), «ՄԻՄ տպագրատուն», Վանաձոր, 2006:
2. Baker, Carlos, Hemingway The Writer as Artist, Princeton University Press, 1972.
3. Chuvakin, A.A., Theory of the text. Moscow: Flinta: Nauka. 2010.
4. Halliday, E.M., Hemingway's Ambiguity: Symbolism and Irony. American Literature, 1956.
5. Hemingway, Ernest, Selected Stories, Progress Publishers, Moscow, 1971.
6. Levin, Harry, Observations on the Style of Ernest Hemingway, <https://books.google.com/books>. Front Cover, 1961.
7. Nelson, Raymond. Hemingway: Expressionist Artist, Ames, Iowa State University Press, 1979.
8. Reynolds, Michael S., The Young Hemingway. -Oxford: Blackwell, 1986.
9. Wyatt, David, Hemingway, Style and the Art of Emotion, University of Maryland, College Park, 2017.
10. <http://bybrittonperelman.com>>writing>how-to-usehemingway'sicebergtheoryinyourwriting

Лингвостилистический анализ рассказа Эрнеста Хемингуэя «Кошка под дождем»

Джагинян Нина

Резюме

Ключевые слова: *идиостиль, «теория айсберга», стилистические средства, символы, отчуждение, заимствованные слова, изоляция человека, минималистский стиль*

Целью представленного исследования является анализ языкового стиля Эрнеста Хемингуэя на материале рассказа «Кошка под дождем», при чем внимание акцентируется на его «Теории айсберга».

Нами подробно рассмотрены средства выразительности и стилистические приемы, встречающиеся в рассказе, с разных точек зрения, в основном, касаясь авторской манеры письма и используемых художественных приемов. Язык Хемингуэя лаконичен, повествователен, прост и силен одновременно. Подлинный характер его манеры письма, в котором он пытался точно воссоздать физические ощущения на протяжении всей своей жизни, на самом деле маскировал эстетическую чувствительность изысканной деликатности.

В данной статье мы также постарались подчеркнуть концепцию «теории айсберга», основная идея которой состоит в том, что писатель должен ориентироваться на минималистский стиль, не уточняя повседневных вопросов или тем. В этом смысле это относится к отношениям текст-подтекст. Наше исследование представляет собой попытку выявить уникальный стиль письма автора с помощью стилистических приемов. Его стиль письма характеризуется простыми словами, простым стилем письма с «бесцветными» прилагательными, наречиями и необычным синтаксисом.

То же самое совершенно очевидно и в рассмотренном нами рассказе «Кошка под дождем», который также богат символами и аллегориями. Рассказ носит психологический и философский характер. Он о человеческой изоляции и жуткой депрессии. Эрнест Хемингуэй, будучи одним из выдающихся деятелей 20-ого века, внес большой вклад в американскую литературу, создав новый уникальный, независимый и оригинальный стиль письма.

Linguo-stylistic Analysis of Ernest Hemingway's "Cat in the Rain"

Jaghinyan Nina

Summary

Key words: *writing style, "The Iceberg theory", stylistic devices, symbols, foreignisms, human isolation, alienation, minimalistic style*

The present study aims to explore the language style of Ernest Hemingway based on the short story "Cat in the rain". This investigation is focused on the writer's language style in close connection with his "The Iceberg theory". We've thoroughly observed stylistic devices and expressive means in the story from different perspectives, mainly touching upon the author's writing style and artistic technique. Hemingway's language style is terse, declarative, simple and vigorous at a time. The true nature of his writing, which attempted to recreate the exact physical sensations he experienced in all his life, in fact masked an aesthetic sensibility of great delicacy. We've also tried to highlight the concept of "The Iceberg theory", the general idea of which is that a writer should focus on a minimalistic style without explicitly stating the undergoing issues or themes. The author himself once mentioned that "If a writer of prose knows enough about what he is writing about, he may omit things that he knows and the reader, if the writer is writing truly enough, will have a feeling of those things as strongly as though the writer had stated them". In this respect it concerns the text and context relationships. This research is an attempt to reveal the very unique writing style of the author through stylistic devices. His style is typical of a limited number of simple words, a plain writing style with colorless adjectives and adverbs and unusual syntax. The same is quite obvious in the observed story "Cat in the rain" which is abundant in symbols and remarkable foreignisms as well. The typical examples of symbols are "the cat", "the rain", "the war monument", etc. The story is psychological and philosophical in its essence. It's also about human isolation and awful alienation. Hemingway being one of the distinguished figures of the 20th century has had a great contribution to American literature creating a new unique, independent and pure writing style.

Ներկայացվել է 04.10.2022 թ.

Գրախոսվել է 06.10.2022 թ.

Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.